№ 38 Մարտի 8 (20) 1880 Մարտի 8 (20) № 38

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

—

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

—

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

—

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

—

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ցանկալի կը լինէր։—Ներքին տեսութիւն. Նամակ խմբագրին. Նամակ խմբագրին. Նամակ խմբագրին. Նամակ խմբագրին. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն. Աւստրիական լրագիրները Ֆրանսիայի մասին. Աֆղանիստան. Գերմանիա. Արտաքին լուրեր։—«Մշակի» հեռագիրները։—Յայտարարութիւններ։

ՑԱՆԿԱԼԻ ԿԸ ԼԻՆԷՐ

—

Այժմ, երբ Ռուսաստանի հայերի մէջ նշմարվում է զօրեղ շարժում օգնել նիւթական նպաստներով մեր Թիւրքիացի հայ սովատանջ եղբայրներին, երբ միայն «Մշակի» ձեռքով հաւաքվեցաւ մօտ երեք շաբաթվայ ընթացքում 12,000 ռուբլից աւելի յօգուտ Վանի սովեալների, ցանկալի կը լինէր մեզ համար մի քանի հարցեր առաջարկել Կ. Պօլսի մէջ հիմնված «սովելոց խնամող կենտրոնական յանձնաժողովին»։

Անկասկած յիշեալ յանձնաժողովը կազմված է շատ յարգելի անձնաւորութիւններից, որոնց մենք վաղուց է արդէն ճանաչում ենք և որոնց հետ մօտ երկու տարի է գործ ունենք։ Նոյն Կիւլպէնկեանի առևտրական տան միջնորդութեամբ, որի ներկայացուցիչները այժմ մասնակցում են կենտրոնական յանձնաժողովին, մենք միշտ հասցնում էինք մեր հաւաքած նուէրները յօգուտ «Արարատեան» ընկերութեան։ Ուրեմն ռուսահայերը կարող են վստահ լինել որ այն ճանապարհը, որ մենք ընտրեցինք յօգուտ սովեալների հաւաքվող դրամները ուղարկելու, ամենաապահով և հաստատ ճանապարհ է։ Յանձնաժողովը, որի նախագահ է պ. Սերովբէ Կիւլպէնկեան, յարգված է թէ ամբողջ Կ. Պօլսի հայ հասարակութիւնից, թէ պաշտօնապէս ճանաչված է պատրիարքարանից։

Միայն մենք կը ցանկայինք այստեղ մի քանի հարցեր առաջարկել յանձնաժողովին, հիմնվելով այն ճշմարտութեան վրա, որ ռուսաստանցի հայերը, որոնք այդ-քան գումարներ նուիրեցին այդ տեսակ կարճ ժամանակամիջոցում, իրաւունք ունեն իմանալ ի՞նչ ձևով են գործ դրվում նրանց նուիրատւութիւնները։

Ցանկալի կը լինէր իմանալ արդեօք այն փողերը, որ ստանում է յանձնաժողովը, նոյն իսկ փողով է բաժանում սովեալներին, թէ հաց կամ ալիւր առնելով, արդեօք յանձնաժողովը ունի իր սեփական ագէնտներ Հայաստանում, թէ իր օգնութիւնը հասցնում է սոված ժողովրդին Թիւրք պաշտօնեաների ձեռքով։ Իր բաժանած նպաստների մասին հաշիւը ո՞րտեղ պէտք է հրատարակի յիշեալ յանձնաժողովը, առանձին գրքոյկով, թէ Կ. Պօլսի որ և է հայ թերթի, օրինակ «Մասիս» միջոցով։

Ցանկալի կը լինէր ի հարկէ, որ յանձնաժողովը բաժանէր իր նպաստները սովալուկներին նախ ցորենով կամ ալիւրով և ապա սերմով, և ոչ թէ փողով, որովհետև այդ փողերը Թիւրք հարկահանները նորից կը խլէին հայ գիւղացուց։ Ցանկալի կը լինէր որ յանձնաժողովը ունենար իր սեփական ագէնտները, հայ ժողովրդի մէջ նպաստներ բաժանելու համար, գործէր կամ հայոց ազգային վարչութեան ներկայացուցիչների, կամ վերջապէս հայ հոգևորականութեան ձեռքով և չը դիմէր Թիւրք պաշտօնեաների օգնութեանը։

Այդ բոլորի մասին ռուսաստանցի հայերը, որոնք հաւատացին և շարունակում են հաւատալ մեզ մեծ գումարներ, մեր կարծիքով իրաւունք ունեն ճշգապէս տեղեկանալու։

Նոյնպէս ցանկալի կը լինէր, որ յանձնաժողովը հրատարակէր «Մշակի» մէջ իր հաշիւները և բացատրէր մեզ իր գործունէութեան եղանակը։

Մենք թէև տեսնում ենք «Մասիս» մէջ տեղեկութիւններ կենտրոնական յանձնաժողովի կողմից, բայց «Մասիս» լրագիրը մատչելի չէ Ռուսաստանի հայերի մեծ մասին, այն ինչ «Մշակի» մէջ իր հաշիւները տպելով, յանձնաժողովը միջոց կը տար ռուսաստանցի նուիրատուներին, որոնց մեծ մասը «Մշակի» մէջ հրատարակում են իրանց նուէրները, ճշգրտութեամբ տեղեկանալ իրանց արած նուէրների գործադրութեան մասին։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Շուշի, 26 փետրվարի

Ձեր լրագրի էջերում Հայաստանի Թշուառ սովատանջների համար տպված յորդորական յօդուածները, սրտաճմլիկ նամակները ազդու ներգործութիւն ունեցան մեր փոքրիկ շրջանի անդամների վրա, որոնք յուզված սրտով իրանց տառապեալ ազգակիցների համար նուիրեցին ըստ չափու կարողութեան. Գրիգոր քահանայ Մէլիք-Դադայեանց նուիրեց 25 ր., Աւետիս Բաբալեան Ջօհրաբեանց 30 ր., Օրիորդ Հռիփսիմէ Դանիէլեանց 25 ր., Հայրապետ Մէլիք-Դադայեանց 15 ր., Զ. Խանդամիրեանց 10 ր., Խուրշուտ Մնարականեանց 10 ռուբլի։ Ընդամենը հարիւր տասն ռուբլի, որ ահա ընդ գրովս ուղարկում եմ ձեզ, խնդրեմ ստանալուց հասցնէք ուր հարկէ։

Խաչատուր Մէլիք-Դադայեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Ցարիցին, 21 փետրվարի

Ստորագրութիւն յօգուտ Վանի սովատանջների՝ Զ. Ց. Կրասիլնիկեանց 10 ր., և նրա աշխատանօք այլ քաղաքներից 23 ր., Ա. Ց. Ջախմախսազեանց 10 ր., Պապաեանց 3 ր., Տէր-Միքայէլեանց 2 ր., Ց. Գ. Ղազիեանցն 3 ր., Շահնազարեանցն 2 ր., Գ. Մ. Ալաջալեանցն 3 ր., Ս. Ա. Բաեանց 2 ր., Ն. Ե. Կիստեանցն 2 ր., Ց. Հախումեանց 1 ր., Բունեաթեանցն 1 ր., Մ. Մաթէոսեանց 1 ր., Մ. Միսկարեանց 1 ր., Մանասեանցն 1 ր., Մ. Մակարեանցն 1 ր., Տէր-Յովսէփեանց 1 ր., Վ. Ղազաղեանց 1 ր., Շխեանցն 1 ր., Յովհաննէսեանցն 1 ր., Դ. Պ. Սերեբրակեանցն 1 ր., Менделѣевъ 5 р., Трескинскій 3 р., Ореховъ 3 р., Дегтеревъ 3 р., Герасимовъ 3 р., Тріумовъ 2 р., Груздевъ 2 р., Черновъ 2 р., Михайловъ 2 р., Блюммеръ 2 р., Ефимовъ 2 р., Кринскій 3 р., Писинъ 2 р., Соловьевъ 3 р., Казѣевъ 3 р., Прохоровъ 3 р., Майоровъ 2 р., Качемозовъ 2 р., Марченко 3 р., Киселевъ 2 р., Булоновъ 3 р., Игнатьевъ 3 р., Смолениновъ 1 р., Кленовъ 1 р., Семеновъ 1 р., Ивановъ 1 р., Захаровъ 1 р., Шепеловъ 1 р., Петровъ 1 р., Кирпичниковъ 1 р., Трубенко 1 р., Захватоевъ 1 р., Михайловъ 1 р., Лазѣевъ 1 р., Назаровъ 1 р., Бенко 1 р., Камовъ 1 р., Талмачовъ 1 р., Качановъ 1 р., Покровскій 1 р., Безверховъ 1 р., Кузнецовъ 1 р., Осокинъ 1 р., Додоновъ 1 р., Кондратьевъ 1 р, Аровъ 1 р., Ривелевъ 1 р., Гавриловъ 1 р., Масловъ 1 р., Сивовъ 1 р., Лапшинъ 1 р., (պարսիկ) Казимовъ 1 р., Джафаръ 1 р., Ратнеръ 2 р,, Меневичъ 3 р., Энтинъ 1 р., Վասիլկովսկի 1 ր., Լիվշնսոն 1 ր., Абельсонъ 1 р., Залткинъ 1 р., Фонштейнъ 1 р., Петрушкинъ 1 р., Пилинкусъ 1 р., Кляткинъ 2 р., Посниковъ 3 р.։ Բոլոր գումարն է 178 ր., փօստայի ծախս 3 ռուբլի դուրս եկած մնում է 175 ռուբլի։

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 5 մարտի

Կրկին հաւաքեցի իմ բարեկամներից մի փոքրիկ գումար, որ խնդրեմ ստանալով, ստորագրողների անունները տպէք ձեր պատուական լրագրի մէջ. Եսայի Աւագեանց 2 ր., փաշա Մամադով 1 ր., Մարգար Տէր-Օհանով 1 ր., Բախշօ Մանուչարեանց 1 ր., Գոլա Աղիեամեանց 1 ր., Նիկոլայ Խալաթեանց 60 կ., Աւետիս Աղալով 60 կ., Աբրահամ Տէր-Գրիգորեանց 50 կ., Սարգիս Նազարեանց 50 կ., Գէորգ Մուրադեանց 50 կ., Յովհաննէս Տէր-Մկրտչեանց 40 կ., Արտէմ Յարութիւնով 40 կ., Յովհաննէս Գաբրիէլով 40 կ., Յովհաննէս Առաքելով 40 կ., Մանուկ Գէորգեանց 10 կ., Ռուբէն Ջօրեանց 1 ր., Սահակ Մկրտիչով 10 կ., Կարապետ Զաքարով 10 կ., Յովհաննէս Բաժբէուկով 20 կ., Արիստակէս Պապեանց 20 կ., Ստեփան Ջօրեանց 1 ր.։ Ընդամենը 13 ր.։

Ս. Ջօրեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Ալէքսանդրապօլ, 25 փետրվարի

Կարդալով լրագրներում վանեցի սովատանջ հայերի ցաւալի դրութեան նկարագիրը, չը կարողացայ անտարբեր մնալ, ուստի պարտականութիւն համարելով օգնել որքան կարելի է այդ մեր ղժբաղդ եղբայրներին, մի մասնաւոր ստորագրութիւնով դիմեցի պաշտօնակիցներիս և ծանօթներիս, յօգուտ նոյն սովատանջների. Ստորագրութիւնից գոյացաւ, փօստի ծախսը 55 կոպէկ դուրս հանած, 62 ռուբլի, որը ուղարկելով խմբագրութեանդ՝ խոնարհաբար խնդրում եմ բարեհաճէք վերոյիշեալ գումարը փոխադրել ուր հարկն է. Նուիրատուները կը սպասեն իրանց անունները տպագրված տեսնել ձեր պատուական լրագրում, ի գիտութիւն համայն ազգի. Ստորագրողների ազգանունները. Բէհբուդ բէկ Փիրումեանց 2 ր., Վաղարշակ Շահխաթունեանց 5 ր., Карапетъ Зарифовъ 1 ր., Ս. Շահինով 55 կ., Մարուգէ Կոստանեանց 1 ր., Միքայէլ Այվազեանց 1 ր., Իվան Յարութիւնեան 1 ր., Կարապետ Տէր-Իսահակեան 2 ր., Տիգրան Անդրէասեան 3 ր., Գաբրիէլ Մելիք-Շահնազարեանց 2 ր., Դաւիթ Ախշարումեան 1 ր., Աղէքսանդր Իսահակեանց 1 ր., Դօլուխանեան 1 ր., Թաղիանոսեանց 1 ր., Հաճիպապ Բաղրամեանց 2 ր. 50 կ., Մահտեսի Աւագ Բաղրամեանց 2 ր. 50 կ., Сынъ Коранова 5 ր., Կարապետ Ղազարեանց 1 ր., Սարգիս Սահրատեանց 5 ր., Սարգիս Միրզաջեանց 3 ր., Եփրեմ Իսահակեանց 1 ր., Ղունկիանոս Տէր-Յարութիւնեանց 2 ր., Գալուստ Բաղրամեանց 5 ր., Գէորգ Խալաթեանց 3 ր., Գրիգոր Դրամբեանց 5 ր., Ալանեանց 3 ր., Յովհաննէս Լալայեանց 2 ր.։ Գումարն է 62 ր.։

Բէհբուդ բէկ Փիրումեանց